



## Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

\*\*\*

Ա.

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ն Ք Ի Կ Ա Ն Դ Ա Կ Ա Յ Վ Ե Հ • Հ Ա Յ Բ Ա Պ Ե Տ Ի

*Հայրապետական տնօրէնութիւնք.*

Կոնդակ յանուն վիճ. Կոնսիս. Երևանայ, ընդ որում յղելով զմեղայական խնդիր ուստադաւան հայոց Բուդդաշէն գեղջ, պատուիրեցաւ ընդունել զնոսա ի ծոց հայոց եկեղեցւոյ: Թ. 272.

— Յանուն Սինօզի Ս. Էջմիածնի, ընդ որում յղելով զպատճէն գրութեան Տ. Փոխարքայի Կովկասու, որ վասն Բարձրագոյն հաստատութեան Տ. Կէսրգ Արքեպիսկոպոսի Սուրէնեանց և Տ. Նահապետ եպիսկոպոսի Նահապետեան յանդամութիւն Սինօզի, պատուիրեցաւ կազմել օրագիր վասն հրաւիրելոյ զնոսա ի գլուխ պաշտաման իւրեանց: Թ. 279.

— Յանուն նորին, որով պատուիրեցաւ կարգադրել ի Սինօզէ վասն վերադարձման Ներսէս քահանայի Հերթեցեան ի Թէոգոսիա: Թ. 295.

— Յանուն վիճ. Կոնսիս. Երևանայ, որով լուծեցաւ պսակ Ղամարլուեցի Սաթենկայ Վարդանեանց ընդ ան-

բարեբարոյ և անյայտացեալ առն պարսկահալատակ Խաչատրոյ Վարդանեան, արածներով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն: Թ. 297.

— Յանուն Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի Առաջնորդի թեմին հայոց Վրաստանի, որով պատուիրեցաւ ստանալ զհաճութիւն Տ. Նահանգապետին Տիխեայ վանն կարգելոյ զՏ. Խոսրով վարդապետն վանահայր Շաւնաբաթի: Թ. 299.

— Յանուն Սինոդի սրբոյ Էջմիածնի, որով պատուիրեցաւ տալ զարան Գոմաձոր-Յամաքաբերդի, զպատկանեալն վանուցն Սեանայ, ի վարձու վեցամեայ ժամանակաւ վանն փորձնական բանջարանոցի: Թ. 319.

— Յանուն Առաջնորդաց հայոց թեմից Ռուսաստանեայց, որով ծանուցաւ՝ եթէ հոգևոր անձինք հայոց ունին իրաւունս մասնակցելոյ ծխական ժողովոյ իրաւաբձայնաւութեան և քուէարկութեան: Թ. Թ. 324, 325, 330, 331, 335 և 336.

— Յանուն Առաջնորդի թեմին Ն. Նախիջևանի և Բեսսարաբիոյ, որով հաստատելով զսահմանեալ ի հոգաբարձութենէ թեմ. Գալանոցի հայոց Ն. Նախիջևանի զկենսաթոշակ տեսուչ Գալուսի Չարխեան, պատուիրեցաւ տալ ընտրել նոր տեսուչ վանն գալանոցին և մատուցանել ի հաստատութիւն: Թ. 347.

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ յաւկայուցանել զ25000 ռ. յեկամալոյ Մայր Աթոռոյ արկածելոյ հայոց Կովկասու, յղելով զգումարն ի Տիխիս նպատամատոյց Յանձնաժողովոյ: Թ. 349.

— Յանուն նորին, որով պատուիրեցաւ յասելուլ ի վերայ 30 ռ. ռոճկի գպիր Գալուսի Տ. Մկրտչեան յամիսն և ս քսան ըուրլի: Թ. 404.

— Յանուն Ասհակ վարդապետի Ամատունոյ, որով

կարգեցաւ մատենագարանապետ մատենագարանի Մայր Աթոռոյ: Թ. 405.

— Յանուն Գեր. Տ. Ղևանդ Եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ զչրտ աստիճանաւոր դպիր ս. Աստուածածին Եկեղեցւոյ Աղէքսանդրապօլսու զՍարգիսն Յակովբեանց ամել յաստիճան սարկաւագութեան: Թ. 434.

— Յանուն Սինօզի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ նշանակել զԲՈՃԻԿ մատենագարանապետի Տ. Սահակ վարդապետի ըստ նախահաշոյ յամիսն 50 ր.: Թ. 435.

— Յանուն նորին, որով պատուիրեցաւ ստուգել զներքին թանգարան Մայր Աթոռոյ: Թ. 436.

— Յանուն Սինօզի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ տալ խնդրատու ժողովրդեան Վաղարշապատ գեղջ թէ անատեղի: և թէ այգեւեղի, զվերջինն ի վարելահոգոց «Պօլակ» և «Հնձանափոս» անուանելոց: Թ. 437.

— Յանուն նորին, ընդ որում յղեցան խնդրագիրք ժողովրդեան Կոստնտու գեղջ Տաթևու վիճակի և առաջագրեցաւ շնորհել իրաւունս կարգընկէց Գրիգոր քահանայի Տ. Սողոմոնեան պաշտելոյ զքահանայութիւն իւր ըստ առաջնոյն ի գեղջն: Թ. 438.

— Յանուն վիճ. Կոնսիս. Աստրախանի, որով տուաւ արտօնութիւն Արմաւրաբնակ Սոֆիայի Գրիգորեան մտանել ի նոր ամուսնութիւն: Թ. 442.

— Յանուն վիճ. Կոնսիս. Ն. Նախիջևանի և Բեռսաբարբիոյ, որով արտօնեցաւ Նունեայ Աստուածատրեանց մտանել ի նոր ամուսնութիւն: Թ. 443.

— Յանուն Առաջնորդի հայոց Ամերիկայի, որով լուծեցաւ պսակ տարի Թորոսի Իլպէկեան ընդ հայ կնոջն Աղանիի Խասապեան վասն անբարոյական ընթացից անն և արտօնեցաւ կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն: Թ. 447.

## Բ.

Հայրապետական գոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ Յանուն Տիկին Մագլթաղինեայ Ատարեանց Եալթայեցւոյ վասն նուիրաբերեալ 300 ռուբ. յօգուտ արկածելոց հայոց Երևանի և Նախիջևանի: Թ. 274.

— Յանուն պ. Նիկողայոսի Դաւթեան Շահնազարեանց Արմաւիրցւոյ վասն նուիրաբերելոյ 1000 ռ. յօգուտ եկեղ. ծխական դպրոցի տեղւոյն: Թ. 328.

— Տիկին Թագուհւոյ Իզմիրեան Եալթա քաղաքացւոյ վասն նուիրաբերելոյ 100 ռ. յօգուտ արկածելոց հայոց Երևանայ և Նախիջևանի: Թ. 363.

— Յանուն պ. Յովհաննիսի Յարութիւնեան Եղեան վասն նուիրաբերելոյ մատենադարանի Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ ի գրեհոյ հանգուցեալ եղբօրն Կարապետի: Թ. 365.

— Յանուն Ախալցխայի Առաքելի Մելքոնեանց վասն նուիրաբերելոյ 100 ռ. ի պէտս Մայր Աթոռոյ: Թ. 380.

— Յանուն հայ գաղթային խորհրդոյ Նիւեօրք քաղաքի վասն նուիրաբերեալ 2026 տոլարի ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու: Թ. 394.

— Յանուն հայ ղինավարժական ընկերութեան Ուստր քաղաքի վասն յղեալ 50 տոլար նուիրաբերութեան ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու: Թ. 395.

— Յանուն Հայուհեաց ընկերութեան Նիկոսիոյ վասն յղեալ 3 ոսկի նուիրաբերութեան ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու: Թ. 396.

— Յանուն Որբախնամ ընկերութեան Տովըրի վասն 10 անգլ. ոսկի նուիրաբերութեան ի նպաստ արկածելոց հայոց Կովկասու: Թ. 397.

— Յանուն Իշխան Սիմէօնի Սիմէօնեան Աբամելիք

Հաղարեան վանն մի հաղար բուբլի (1000 ռ.) նուիրար, ի նպաստ աղքատաց: Թ. 417.

— Յանուն Արմաւիրցի եղբ. Աղէքսանդրի և Միքայէլի Թորոսեանց վանն 500 ռ. նուիրար, ի նպաստ արկածեւոց հայոց Կովկասու: Թ. 420.

— Յանուն Արմաւիրցի Գէորգայ Բարանեանց վանն 100 ռ. նուիրար, ի նոյն նպատակ: Թ. 421.

— Յանուն Արմաւիրցի Յարութիւնի Մարկոսեան Թորոսեանց վանն 200 ռ. նուիրար, ի նոյն նպատակ: Թ. 422.

— Յանուն Արմաւիրցի Նիկողայոսի Դաւթեան Շահ-նաղարեանց վանն 150 ռ. նուիր, ի նոյն նպատակ: Թ. 423.

— Յանուն Արմաւիրցի Աղէքսանդրի Սէֆէրեանց վանն 100 ռ. նուիրար, ի նոյն նպատակ: Թ. 424.

— Յանուն Արմաւիրցի Սիմէօնի Սէֆէրեանց վանն 100 ռ. նուիրար, ի նոյն նպատակ: Թ. 425.

— Յանուն Արմաւիրցի Գէորգայ Սէֆէրեանց վանն 200 ռ. նուիրար, ի նոյն նպատակ: Թ. 426.

## Գ.

## Հայրապետական պարգեւք.

Կոնդակ վարդապետական լանջախաչի յանուն Տ. Ղուկաս վարդապետի վանուցն Խոր-վիրապի: Թ. 348.

— Քահանայական լանջախաչի յանուն Վրթանէս քահանայի Մարգարեան Երեան քաղաքի: Թ. 350.

— Վարդապետական լանջախաչի յանուն Տ. Ներսէս վարդապետի Տ. Միքայէլեան: Թ. 351.

— Կամիլաւկայի յանուն Յարութիւն քահանայի Եաղուբեանց Աստրախանի: Թ. 352.

— Կամիլաւկայի յանուն Ներսէս քահանայի Իլիա-  
զեանց Աստրախանի։ Թ. 352.

— Կամիլաւկայի յանուն Սեդրակ քահանայի Ազա-  
բալեանց Աստրախանի։ Թ. 354.

— Կամիլաւկայի յանուն Թովմաս քահանայի Արբա-  
կեանց Ազրարի։ Թ. 355.

— Կամիլաւկայի յանուն Գէորգ քահանայի Մկրտու-  
մեանց Աստրախանի։ Թ. 356.

— Կամիլաւկայի յանուն Յակովբ քահանայի Սառի-  
կեանց Վլադիկաւկազի։ Թ. 357.

— Կամիլաւկայի յանուն Ռուբէն քահանայի Բէկզիւ-  
լեանց Սմրղանդի։ Թ. 358.

— Քահանայական լանջախաչի յանուն Արչէն քահա-  
նայի Մարգարեան Պետրովսկ քաղաքի։ Թ. 359.

— Քահանայական լանջախաչի յանուն Յակովբ քա-  
հանայի Խաչվանքեանց Մոզդոկի։ Թ. 360.

— Քահանայական լանջախաչի յանուն Վահան քա-  
հանայի Ասկարեանց Մայկօպի։

— Քահանայական լանջախաչի յանուն Արխատակէս  
քահանայի Խիմզեանց Սիբիրիոյ։ Թ. 362.

— Կամիլաւկայի յանուն Գէորգ քահանայի Աւա-  
զեանց Մատրասա գեղջ։ Թ. 374.

— Քահանայական լանջախաչի յանուն Յովսէփ քա-  
հանայի Տ. Պետրոսեան Տփլիս քաղաքի։ Թ. 382.

— Յանուն Աբրահամ քահանայի Ազազեանց, որով  
չնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան։ Թ. 383.

— Կամիլաւկայի յանուն Ներսէս քահանայի Տ. Պետ-  
րոսեան Սուրամի։ Թ. 384.

— Յանուն Յակովբ քահանայի Գուլեան Ուփլիսցիխէ

գեղջի սրով շնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան: Թ. 385.

— Կատիլաւայի յանուն Եղիշէ քահանայի Թարխանեան Շուշի քաղաքի: Թ. 387.

Քահանայք այսօրիկ պարգեատրեալ են ըստ առաջարկութեան Գեր. Տ. Արխտակէս Արքեպիսկոպոսի, ս. Առաջնորդի թեմին հայոց Աստրախանի, Տ. Գաբեգին Արքեպիսկոպոսի՝ ս. Առաջնորդի թեմին հայոց Վրաստանի և Իմերէթի, Տ. Անանիա Արքեպիսկոպոսի, ս. Առաջնորդի վիճակին հայոց Շամախոյ, Տ. Յուսիկ եպիսկոպոսի Փոխ թեմակալի վիճակին հայոց Երևանայ և Տ. Աշոտ եպիսկոպոսի, Առաջնորդի թեմին հայոց Արցախայ:



ՔԱԼՈՒԱԾՔ ՍԻՆՅՈՒՆ ՕՒՍԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Մարտի 20-ին Սինոդը լսելով զեկուցումն. Ամեն անգամ երբ Սինոդ դիմեն վարքապատկան գիւղերի բնակիչներինց իրանց տունը կամ այգին ուրիշին շահեկանութեան տալու խնդրագրով, վանական կառավարութեան միջոցով յայտարարել ի լուր հասարակութեան թէ արդեօք այդ տունը կամ այգին մի ուրիշի չի վաճառել տէրը, և յայտարարութեան օրից 15 օր անցնելուց յետոյ, եթէ շահագրգռուած անձն չյայտնուի ընթացք տալ խնդրին:

Այս կարգադրութիւնը արել է Սինոդն այն պատճառով, որ երբեմն գիւղացիներինց սմանք իրանց տունը կամ այգին վաճառում են մի քանի անձանց և խաբէութեամբ գրամներ են շորթում, սխալանքի մէջ գցելով և Սինոդին:

Նոյն օրը լսելով Վաղարշապատցի Արաէմ Ստեփանեանի խնդիրը, օրով խնդրում էր իր շահեկանութեան համար վկայական տալ նոյեմզար Վարդանեանցի անունով, որից այգու արժէքը լիովին ստացել է, մեծել, օրովհետև յիշեալ Արաէմ Ստեփանեանը առաջուց նոյն այգին վա-